ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2021
02.2021
03.2021
Մարտ
04.2021
05.2021
06.2021
07.2021
08.2021
09.2021
10.2021
11.2021
12.2021

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 28-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2021

Մարտ

թիվ 3 (271)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-89-Ն ՀՀ օրենքը

7 «Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՕ-97-Ն ՀՀ օրենքը

8 «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-103-Ն ՀՀ օրենքը

9 «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-114-Ն ՀՀ օրենքը

10 «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-117-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

12 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «Հայփոստ» ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպությանը էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն տրամադրելու մասին

12 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՍԻԹԻ», «ԳՐՈՍ-ՌԻԵԼԹՈՐ» ՍՊԸ-ներին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու մասին

12 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ՏԻՎԱ» ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու մասին

12 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ «Շուշի» և «Հադրութ», «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ «Էլիտ Պլազա» և «Խորենացի», «Բյուզանդ» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը թույլատրելու մասին

12 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ «Արթիկ» մասնաճյուղը գրանցելու մասին

12 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 վարկային կազմակերպության նկատմամբ տուգանք կիրառելու, 1 վարկային կազմակերպության նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

12 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 25Լ որոշումը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման մասին

13 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

*«Սնանկության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին**

Հոդված 1. «Սնանկության մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 3-րդ մասը «բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով» բառերից հետո լրացնել «կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով» բառերով:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետից հանել «, սնանկության գործով կառավարչի վերաբերյալ առաջարկը» բառերը:

Հոդված 3. Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժ» կետով.

«ժ) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն:»:

Հոդված 4. Օրենքի 15.4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժ» ենթակետով.

«ժ) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը:»:

Հոդված 5. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը « - Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

« - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը:»:

Հոդված 6. Օրենքի 27.3-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետից հանել «եռամսյա» բառը:

Հոդված 7. Օրենքի 27.4-րդ հոդվածի 3-րդ մասը «դատարան» բառից հետո լրացնել «կառավարչի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցը սույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված իր լիազորությունների շրջանակներում քննարկելու նպատակով» բառերով:

Հոդված 8. Օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ մասում «Եթե պարտապանը չունի գույք, կամ նրա գույքի արժեքը պակաս է նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից, ապա» բառերը փոխարինել «Սույն օրենքի 105-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերով նախատեսված հիմքերով սնանկության գործն ավարտվելու դեպքում, ինչպես նաև այլ հիմքով սնանկության գործն ավարտվելու և պարտապանի գույքի արժեքը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից պակաս լինելու դեպքում» բառերով:

Հոդված 9. Օրենքի 39.2-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2021 թվականի մարտի 3-ին (ՀՀՊՏ, 25.03.2021):

«1. Դատարանը, ստանալով ապահովված պարտատիրոջ դիմումը, դիմումի օրինակը երկու աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է պարտապանին և կառավարչին, որոնք դիմումի օրինակն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, կարող են հայտնել գրավոր դիրքորոշում դիմումի կապակցությամբ:».

2) 2-րդ մասի «սահմանված ժամկետում» բառերը փոխարինել «հինգ աշխատանքային օրվա ընթացքում» բառերով.

3) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3) ապահովված պարտատիրոջ պահանջի քննությունը ենթակա է կասեցման:»:

Հոդված 10. Օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի երրորդ պարբերությունում «ապա դատավորն առարկությունն ստանալու հաջորդ օրը հրավիրում է դատական նիստ» բառերը փոխարինել «ապա դատավորն առարկությունն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, նշանակում է դատական նիստ» բառերով:

Հոդված 11. Օրենքի 80-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «պարտատերերի կողմից ընդունված» բառերը փոխարինել «սույն հոդվածով սահմանված կարգով ընդունված» բառերով.

2) 4-րդ մասի առաջին պարբերությունից հանել «պարտատերերի կողմից» բառերը:

Հոդված 12. Օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ը.1» կետով.

«ը.1) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված իրավասու մարմնի պահանջները.»:

Հոդված 13. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-ին գլխով.

«ԳԼՈՒԽ 12.1

ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐՏԱՊԱՆԻ՝ ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Հոդված 105.1. **Օրենքի կիրառելիությունն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարաբերությունների նկատմամբ**

1. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա հայցի ներկայացման և գործի քննության նկատմամբ չեն կիրառվում սույն օրենքի 15.5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով, 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված սահմանափակումները, իսկ տվյալ գործի շրջանակներում կիրառված ապահովման միջոցների առնչությամբ՝ սույն օրենքի 15.5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 39-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված սահմանափակումները:

Հոդված 105.2. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցերով իրավասու մարմնի կարգավիճակը սնանկության վարույթի ընթացքում

1. Սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված ծանուցումն ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված իրավասու մարմինը (այսուհետ սույն հոդվածում՝ իրավասու մարմին) պարտավոր է դատարան ներկայացնել տեղեկատվություն պարտապանի գույքի առնչությամբ՝ ծանուցումն ստանալու պահին ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտերի,

հարուցված քաղաքացիական գործերի, կատարողական վարույթների և կիրառված ապահովման միջոցների մասին: Պարտապանի գույքի առնչությամբ՝ ծանուցումն ստանալուց հետո ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող դատական ակտերի, հարուցված քաղաքացիական գործերի, կատարողական վարույթների և կիրառված ապահովման միջոցների մասին իրավասու մարմինը դատարան է ներկայացնում տեղեկատվություն համապատասխան հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետներում իրավասու մարմինը դատարան է ներկայացնում նաև տեղեկատվություն պարտատերերի այն պահանջների մասին, որոնք վիճարկվում են իրավասու մարմնի կողմից և կարող են չհաստատվել դրա արդյունքներով:

3. Սնանկության վտանգի դիմումը բավարարելու և ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին կամ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո իրավասու մարմինը կարող է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործի շրջանակներում ծանոթանալ սնանկության վարույթի նյութերին, այդ թվում՝ պարտապանի ֆինանսական վիճակի վերլուծությանը, ինչպես նաև կառավարչից պահանջել տեղեկություններ պարտապանի գործունեության, ֆինանսական վիճակի, ներառյալ՝ գույքագրված ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ: Պահանջվող տեղեկատվությունն իրավասու մարմին է ներկայացվում անհապաղ, բայց ոչ ուշ, քան իրավասու մարմնի պահանջն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

4. Եթե սնանկության գործի քննությունը կարող է ազդել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի վրա, ապա իրավասու մարմինը սույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված ծանուցումն ստանալուց հետո իր նախաձեռնությամբ կարող է դիմել դատարան՝ միջնորդելով ճանաչել իրավասու մարմինը՝ որպես շահագրգիռ անձ: Դատարանի կողմից միջնորդությունը բավարարվելու դեպքում իրավասու մարմինը սույն օրենսգրքի 39.2-րդ, 40-րդ, 46-րդ և 80-րդ հոդվածներով նախատեսված հարցերով ձեռք է բերում պարտատերերի և պարտապանի կարգավիճակից բխող իրավունքներ, ներառյալ՝ դիմումների պատճենները, պահանջների փոփոխությունները, միջանկյալ բաշխման ծրագրերը և դատարանի որոշումներն ստանալու, ներկայացված դիմումները վիճարկելու, առարկություններ և դիրքորոշումներ ներկայացնելու, դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցվելու և նիստին մասնակցելու իրավունքներ:»:

Հոդված 14.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի կարգավորումները տարածվում են այն սնանկության գործերի վրա, որոնք հարուցվել են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, կամ որոնք հարուցվել են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը, սակայն օրենքն ուժի մեջ մտնելու պահին այդ գործերով չի կայացվել պարտատերերի վերջնական ցուցակը հաստատելու մասին դատարանի որոշում:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան

24 մարտի 2021 թ., Երևան, ՀՕ-89-Ն

*«Կենտրոնական բանկի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին**

Հոդված 1. «Կենտրոնական բանկի մասին» 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-69 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ մասի «թ» կետից, 7.1-ին հոդվածի 2-րդ մասից և 20-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետից հանել «կանխարգելման» բառը:

Հոդված 2. Օրենքի 7.1-ին հոդվածում՝

1) 3-րդ մասի «Կենտրոնական բանկը և Հանձնաժողովը կնքում են համագործակցության հուշագիր» բառերը փոխարինել «Հանձնաժողովի նախագահը և Կենտրոնական բանկի նախագահը ստորագրում են համատեղ հրաման» բառերով.

2) 3-րդ մասի «գ» կետը «վերահսկվող անձանց նկատմամբ» բառերից հետո լրացնել «և այդ դեպքերում Հանձնաժողովի դիրքորոշման ներկայացման ընթացակարգն ու փոխհամագործակցության մանրամասները» բառերով.

3) 7-րդ մասի երկրորդ պարբերության «համագործակցության հուշագրով» բառերը փոխարինել «համատեղ հրամանով» բառերով.

4) 7-րդ մասի երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն մասով նախատեսված դեպքերում ընդունված որոշումները Կենտրոնական բանկը հանձնում է Հանձնաժողովին, բացառությամբ այն հատվածների, որոնք պարունակում են բանկային գաղտնիք կամ այնպիսի տեղեկություն, որի տրամադրումն արգելված է օրենքով կամ կարող է թույլատրվել միայն դատական ակտի հիման վրա:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երկու ամիս հետո:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
30 մարտի 2021 թ., Երևան, ՀՕ-97-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2021 թվականի մարտի 3-ին (ՀՀՊՏ, 31.03.2021):

*«Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին**

Հոդված 1. «Արժեթղթերի շուկայի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում «Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական» բառերը փոխարինել «Մրցակցության պաշտպանության» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երկու ամիս հետո:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
30 մարտի 2021 թ., Երևան, ՀՕ-103-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2021 թվականի մարտի 3-ին (ՀՀՊՏ, 31.03.2021):

*«Բանկային գաղտնիքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին**

Հոդված 1. «Բանկային գաղտնիքի մասին» 1996 թվականի հոկտեմբերի 7-ի ՀՕ-80 օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում «արդյունաբերական նմուշի» բառերը փոխարինել «արդյունաբերական դիզայնի» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հուլիսի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
30 մարտի 2021 թ., Երևան, ՀՕ-114-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2021 թվականի մարտի 3-ին (ՀՀՊՏ, 31.03.2021):

*«Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին**

Հոդված 1. «Արժեթղթերի շուկայի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի 97-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) հանել «կամ օգտակար մոդելի» բառերը.

2) «, արդյունաբերական նմուշի» բառերը փոխարինել «կամ արդյունաբերական դիզայնի» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հուլիսի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
30 մարտի 2021 թ., Երևան, ՀՕ-117-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2021 թվականի մարտի 3-ին (ՀՀՊՏ, 31.03.2021):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն է տրամադրվել*** «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպությանը (որոշում թիվ 24Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ՍԻԹԻ», «ԳՐՈՒ-ՌԻԵԼԹՈՐ» ՍՊԸ-ներին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները (որոշումներ թիվ 30Ա, 31Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ՏԻՎԱ» ՍՊԸ-ին (որոշում թիվ 33Ա):
- ***Թույլատրվել է*** «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության «Շուշի» և «Հադրութ», «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության «Էլիտ Պլազա» և «Խորենացի», «Բյուզանդ» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը (որոշումներ թիվ 1/126Ա, 1/144Ա, 1/160Ա):
- ***Գրանցվել է*** «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Արթիկ» մասնաճյուղը (որոշում թիվ 1/147Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 վարկային կազմակերպության նկատմամբ ***կիրառվել է տուգանք*** 8 500 000 դրամ գումարի չափով (որոշում թիվ 1/157Ա), 1 վարկային կազմակերպության ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշում թիվ 1/157Ա):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2021 թ. մարտի 16-ի թիվ 25Լ որոշմամբ ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 5.5%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը՝ 7.0%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 4.0%:***

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՄԱՐՏ 2021)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
Էլ. փոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝ http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 17
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների փոփոխություն
Գնաճ
Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 21
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 26
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 27
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 37
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ-ի կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ԿԲ-ի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 56
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 66
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 68
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 77
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	2021 թ. փետրվար	2021 թ. փետրվարի իրական աճի փոփոխությունը 2020 թ. փետրվարի նկատմամբ (%)	2021 թ. մարտ	2021 թ. մարտի իրական աճի փոփոխությունը 2020 թ. մարտի նկատմամբ (%)
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		-5.3		3.8
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	157857.5	-5.1	175215.9	3.8
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	16222.3	1.1	19990.0	10.8
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	225766.1[1]	-7.8	250213.9	4.6
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	132240.6	-12.4	145126.7	0.9
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)*	634.4	-13.7	736.1	18.3
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	237102[1]	-1.6[2]	246130[3]	-2.4[4]

ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2021 թ.	Գնաճ	Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը	Գների փոփոխությունը շինարարությունում	Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների փոփոխությունը
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	2.2	1.1	0.6	1.1
Փետրվար	0.6	0.5	1.0	0.9
Մարտ	1.0	1.8	-0.9	-0.9
2021 թ. հունվար - մարտը 2020 թ. հունվար - մարտի նկատմամբ	5.2	7.1	11.6	-1.5

ԳՆԱՁ

Ժամանակաշրջան	2019	2020	2021
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	1.8	1.4	2.2
Փետրվար	0.6	-0.2	0.6
Մարտ	0.1	0.5	1.0
Ապրիլ	-0.1	0.9	
Մայիս	-0.4	-0.1	
Հունիս	-1.9	-1.4	
Հուլիս	-1.9	-2.1	
Օգոստոս	-0.4	-0.1	
Սեպտեմբեր	0.2	-0.2	
Հոկտեմբեր	0.6	0.5	
Նոյեմբեր	1.1	1.3	
Դեկտեմբեր	1.3	3.4	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.8	0.3	4.5
Փետրվար	1.9	-0.5	5.3
Մարտ	1.9	-0.1	5.8
Ապրիլ	2.2	0.9	
Մայիս	2.8	1.2	
Հունիս	2.5	1.7	
Հուլիս	1.7	1.5	
Օգոստոս	0.6	1.8	
Սեպտեմբեր	0.5	1.4	
Հոկտեմբեր	0.9	1.3	
Նոյեմբեր	1.0	1.6	
Դեկտեմբեր	0.7	3.7	

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՁԻՆ [5]

Անվանում	*2021 թ. մարտը 2020 թ. մարտի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)*
Գնաճ	**5.8**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	7.4	2.76
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	9.2	0.41
Հագուստ և կոշիկ	6.9	0.28
Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	1.5	0.23
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	8.8	0.31
Առողջապահություն	6.6	0.63
Տրանսպորտ	8.9	0.77
Կապ	1.0	0.04
Հանգիստ և մշակույթ	1.2	0.02
Կրթություն	2.1	0.07
Ռեստորաններ և հյուրանոցներ	2.5	0.04
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	5.2	0.30

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ [5,6]

Ժամանակաշրջան	2019	2020	2021
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	-0.2	0.0	0.7
Փետրվար	0.1	0.1	0.5
Մարտ	0.1	0.0	0.5
Ապրիլ	0.0	0.5	
Մայիս	-0.1	0.0	
Հունիս	0.0	-0.1	
Հուլիս	-0.2	-0.1	
Օգոստոս	0.1	0.1	
Սեպտեմբեր	0.2	0.3	
Հոկտեմբեր	0.1	0.3	
Նոյեմբեր	0.1	0.3	
Դեկտեմբեր	0.1	0.9	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	1.2	0.4	3.0
Փետրվար	1.0	0.4	3.3
Մարտ	0.9	0.3	3.9
Ապրիլ	0.7	0.8	
Մայիս	0.7	0.8	
Հունիս	0.8	0.7	
Հուլիս	0.8	0.8	
Օգոստոս	0.7	0.8	
Սեպտեմբեր	0.6	0.9	
Հոկտեմբեր	0.2	1.2	
Նոյեմբեր	0.1	1.4	
Դեկտեմբեր	1.8	2.2	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[5,6]

Անվանում	2021 թ. մարտը 2020 թ. մարտի նկատմամբ	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**3.9**	
Բուսական յուղ արևածաղկի	62.2	0.50
Օդային տրանսպորտի միջազգային չվերթներ իրականացնող ծառայություններ	77.2	0.43
Հաց ցորենի, բարձր տեսակի	8.4	0.35
Գազ փոխադրամիջոցների լիցքավորման համար	6.7	0.34
Շաքարավազ	40.9	0.18
Հավի միս՝ (ամբողջական հավ) թարմ, պաղեցրած	15.1	0.18
Լվացքի փոշի ավտոմատ մեքենայի համար	14.9	0.16
Ալյուր ցորենի, բարձր տեսակի	14.4	0.14
Ծխագլանակներ ֆիլտրով՝ այլ երկրների արտադրության	14.4	0.12
Օղի այլ երկրների արտադրության	20.7	0.12
Այլ դեղագործական ապրանքներ	19.4	0.11
Օղի հայրենական արտադրության	22.7	0.10
Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից լրացուցիչ բնակատեղիների համար	6.9	0.09
Սրտանոթային դեղամիջոցներ	9.3	0.08
Միս տավարի և հորթի՝ ոսկորով՝ թարմ կամ պաղեցրած	-2.9	-0.11

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայված տվյալների հիման վրա:

[3] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների:

[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:

[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	*2021 թ. հունվար - փետրվար (մլն ԱՄՆ դոլար)*	*2021 թ. հունվար - փետրվարը 2020 թ. հունվար - փետրվարի նկատմամբ (%)*	*2021 թ. հունվար – մարտ (մլն ԱՄՆ դոլար)*	*2021 թ. հունվար - մարտը 2020 թ. հունվար - մարտի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	354.4	94.5	572.9	103.4
Ներմուծում *(ՍԻՖ)*	571.1	84.2	936.4	91.3
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	216.7	71.4	363.5	77.1

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2020 թվական					
	Մարտ			Հունվար – մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	51731	36043	15688	164368	86654	77714
ԱՄՆ	23500	17565	5935	62976	34575	28401
Ուկրաինա	1028	983	45	3158	3099	59
Ղազախստան	1528	342	1187	5119	987	4132
Գերմանիա	4062	1708	2354	11152	38653	-27501
Իսպանիա	667	1287	-620	2423	3435	-1012
Ֆրանսիա	2597	1014	1583	7781	3481	4300
ԱՄԷ	2910	738	2173	7529	3373	4156
Չինաստան	180	2492	-2312	638	6984	-6346
Թուրքիա	143	717	-574	527	2016	-1489
Այլ երկրներ	29492	28136	1356	87892	82928	4964
Ընդամենը	**117840**	**91024**	**26816**	**353563**	**266185**	**87378**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2021 թվական					
	Մարտ			Հունվար – մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	62770	37128	25642	153940	85959	67981
ԱՄՆ	45693	13461	32232	117925	43879	74046
Ուկրաինա	1354	1620	-266	3562	4083	-521
Ղազախստան	5435	391	5044	13189	923	12267
Գերմանիա	6190	2638	3552	14704	6781	7923
Իսպանիա	1089	984	104	3108	2702	406
Ֆրանսիա	4610	1645	2965	12495	4351	8143
ԱՄԷ	1744	2043	-299	4765	8830	-4064
Չինաստան	187	6620	-6433	501	13599	-13098
Թուրքիա	165	396	-231	468	1224	-755
Այլ երկրներ	30206	26656	3549	80938	104180	-23243
Ընդամենը	**159443**	**93583**	**65860**	**405595**	**276510**	**129084**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2020 թվական					
	Մարտ			Հունվար – մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	25210	17594	7616	79146	41828	37318
ԱՄՆ	11474	8571	2903	30381	16718	13663
Ուկրաինա	502	480	22	1522	1493	29
Ղազախստան	743	167	576	2462	476	1986
Գերմանիա	1985	831	1154	5381	18522	-13142
Իսպանիա	325	631	-305	1166	1659	-493
Ֆրանսիա	1260	496	765	3743	1678	2065
ԱՄԷ	1426	362	1064	3638	1625	2013
Չինաստան	88	1218	-1130	308	3371	-3063
Թուրքիա	70	350	-280	254	972	-718
Այլ երկրներ	14382	13782	600	42354	40020	2334
Ընդամենը	**57465**	**44481**	**12984**	**170354**	**128361**	**41994**

մլն ՀՀ դրամ

Երկիր	2021 թվական					
	Մարտ			Հունվար – մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	33113	19588	13525	80762	45098	35664
ԱՄՆ	24108	7103	17006	61843	22972	38871
Ուկրաինա	714	855	-141	1868	2143	-274
Ղազախստան	2869	206	2662	6922	484	6438
Գերմանիա	3267	1392	1875	7714	3556	4158
Իսպանիա	574	519	55	1630	1417	213
Ֆրանսիա	2431	867	1564	6552	2280	4271
ԱՄԷ	921	1077	-156	2497	4627	-2129
Չինաստան	99	3492	-3394	263	7137	-6874
Թուրքիա	87	209	-122	245	641	-395
Այլ երկրներ	15933	14051	1882	42432	54498	-12065
Ընդամենը	**84115**	**49359**	**34756**	**212728**	**144851**	**67878**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3,4]

2020	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	144.3	146.9	149.7	154.1	154.3	149.6	146.7	145.7	147.0	147.1	144.5	139.8
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	300.5	307.0	312.2	319.7	321.1	316.8	318.0	317.2	321.8	322.8	314.5	295.9
2021	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	140.4	140.0	141.1									
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	292.5	291.8	293.3									

[1] Հաշվարկում ընդգրկված են 12 գործընկեր երկրների փոխարները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը, 2007-2011 թթ. կշիռներով, 1997=100:
[2] Բոլոր փոխարները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:
[3] Աճը նշանակում է արժևորում:
[4] Վերանայվել են Իրանի Իսլամական Հանրապետության փոխարները, մասնավորապես՝ ազգային արժույթի փոխարժեքի մասով, սկսած 2018 թվականի հունվարից, ԻԻՀ կենտրոնական բանկի փոխարների փոխարեն օգտագործվել են արտարժույթի շուկայի փոխարները, իսկ ՍԳԻ հաշվարկներում՝ ԻԻՀ վիճակագրական ծառայության փոխարները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ


մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2020	2021		
	Դ [2]	Հ	Փ	Մ [3]
Համախառն միջազգային պահուստներ	**2614.1**	**2400.3**	**3184.5**	**3003.3**
Ոսկի	0.0	0.0	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	9.0	6.3	4.4	2.9
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0.0	0.0	0.0	0.0
Արտարժույթ [1]	2605.2	2394.0	3180.1	3000.3

[1] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

[3] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2020	2021		
	Դ [2]	Հ	Փ	Մ [3]
Համախառն արտաքին պարտավորություններ	**589.0**	**628.6**	**630.7**	**621.7**
ԱՄՀ վարկ	161.4	161.5	161.9	157.3
ՀՓԻ տեղաբաշխում	126.7	126.6	127.3	124.7
Այլ վարկեր	299.6	339.8	340.6	338.9
Այլ պարտավորություններ	1.2	0.7	0.8	0.8

[1] Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:
[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:
[3] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

	Պահանջներ Կառավարության նկատմամբ	Պարտավորություններ Կառավարության նկատմամբ	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	պետական պարտատոմսեր	Կառավարության ավանդներ և հաշիվներ (ներառյալ ԾԻԳ-երի միջոցները)	
2020			
Դեկտեմբեր[1]	11537	266464	**-254927**
2021			
Հունվար	11606	324433	**-312826**
Փետրվար	10307	637625	**-627318**
Մարտ	10360	565343	**-554983**

[1] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

	Փողի բազա [1] (մլրդ ՀՀ դրամ)	Շրջանառությունում կանխիկ դրամ (մլրդ ՀՀ դրամ)	Ցպահանջման ներդրվող միջոցներ (մլրդ ՀՀ դրամ)	M1 [2] (մլրդ ՀՀ դրամ)	Ժամկետային ներդրվող միջոցներ (մլրդ ՀՀ դրամ)	M2 [3] (մլրդ ՀՀ դրամ)	Արտարժութային ներդրվող միջոցներ (մլրդ ՀՀ դրամ)	M2X [4] (մլրդ ՀՀ դրամ)	Փողի բազմապատկիչ [5]	Դրամային զանգվածի [6]
2020										
Դեկտեմբեր	1563669	648437	588305	1236742	947163	2183904	1178134	3362038	2.15	2.07
2021										
Հունվար	1383507	609988	537742	1147730	947246	2094976	1191784	3286760	2.38	2.14
Փետրվար	1437549	603218	573562	1176780	959693	2136473	1239029	3375502	2.35	2.17
Մարտ	1497529	596223	595181	1191403	964922	2156325	1268647	3424972	2.29	2.04

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
1600000
1400000
1200000
1000000
800000
600000
400000
200000
0
ՀԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
4000000
3500000
3000000
2500000
2000000
1500000
1000000
500000
0
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
20
15
10



Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
40
35
30
25
20


ՍԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1]


մլն ՀՀ դրամ


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2020					
Դեկտեմբեր	1385914	614663	1168585	2114252	3266252
2021					
Հունվար	1366768	614638	1144619	2092210	3279610
Փետրվար	1439380	621487	1185924	2129290	3348279
Մարտ	1447248	609992	1204243	2172162	3399376

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով, ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի տարվա առաջին համարում: Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով Census X-12-ARIMA հարթեցման եղանակը:*


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
1700000
1500000
1300000
1100000
900000
700000
500000
Փողի բազայի փաստացի շարքեր
Փողի բազայի հարթեցված շարքեր


Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
700000
600000
500000
400000
300000
200000
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի շարքեր
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի հարթեցված շարքեր


Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
2500000
2100000
1700000
1300000
900000
500000
Դրամային զանգվածի փաստացի շարքեր
Դրամային զանգվածի հարթեցված շարքեր


Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
3800000
3400000
3000000
2600000
2200000
1800000
1400000
1000000
Փողի զանգվածի փաստացի շարքեր
Փողի զանգվածի հարթեցված շարքեր

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2020	2021		
	Դ [2]	Հ	Փ	Մ [3]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)				
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***1058343***	***918228***	***1348334***	***1264986***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***505326***	***465278***	***89215***	***232544***
Կառավարություն	-254927	-312826	-627318	-554983
Բանկեր	467933	482095	432805	502503
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	345953	331195	280172	348800
ՀՀ ԿԲ-ի կողմից արտարժույթի ներգրավման սվոպ	0	0	0	0
Դրամական միջոցների ներգրավում (-)	-23405	0	0	0
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	0	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0
ՀՀ ԿԲ-ի կողմից արտարժույթի տրամադրման սվոպ (-)	-13919	-11300	-8625	-8708
ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	292320	296010	283728	285024
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***1563669***	***1383507***	***1437549***	***1497529***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	751466	699199	688470	680905
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	275377	245482	262509	343635
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	483274	378684	426678	416571
Այլ հաշիվներ	53552	60142	59892	56419
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	28282	34025	33505	30395
Այլ հաշիվներ արտարժույթով	25270	26117	26387	26024
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-140114***	***430106***	***-83349***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-40048***	***-376063***	***143329***
Կառավարություն	-	-57899	-314492	72335
Բանկեր	-	14162	-49290	69698
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-	-14757	-51023	68628
Դրամական միջոցների ներգրավում (-)	-	-23405	0	0
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	-	0	0	0
ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	3689	-12282	1296
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-180162***	***54042***	***59980***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-52267	-10729	-7565
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	-29895	17027	81126
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-104590	47995	-10108
Այլ հաշիվներ	-	6590	-250	-3473
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	-	5743	-520	-3110
Այլ հաշիվներ արտարժույթով	-	848	270	-363
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-13.2***	***46.8***	***-6.2***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-7.9***	***-80.8***	***160.7***
Կառավարություն	-	-22.7	-100.5	11.5
Բանկեր	-	3.0	-10.2	16.1
ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0.0	0.0	0.0
Զուտ այլ ակտիվներ	-	1.3	-4.1	0.5
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-11.5***	***3.9***	***4.2***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-7.0	-1.5	-1.1
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	-10.9	6.9	30.9
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-21.6	12.7	-2.4
Այլ հաշիվներ	-	12.3	-0.4	-5.8

[1] Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը:
[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:
[3] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2020	2021		
	Դ	Հ	Փ	Մ
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-1550406**	**-1384244**	**-1408694**	**-1378259**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	392668	408407	430629	428088
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-1671164	-1522649	-1573048	-1528182
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-271909	-270001	-266275	-278165
ԶՆԱ	**4265837**	**4053672**	**4175894**	**4211761**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	802574	829782	853428	883013
Պահանջներ Կառավարության նկատմամբ	837380	866533	890427	918172
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-34806	-36751	-36999	-35158
Զուտ պահանջներ ԿԲ-ի նկատմամբ	418047	259726	373991	374825
Պահանջներ ԿԲ-ի նկատմամբ	883111	712012	773006	843367
Պարտավորություններ ԿԲ-ի նկատմամբ (-)	-465064	-452286	-399015	-468542
Տնտեսություն	4122041	4038066	4045989	4072256
Ձեռնարկություններ	2147630	2112081	2116831	2140516
Դրամով	524132	527059	524899	528222
Արտարժույթով	1526794	1489350	1497805	1514695
Արժեթղթեր	96704	95672	94127	97599
Տնային տնտեսություններ	1681517	1681611	1696725	1705496
Դրամով	1302177	1310433	1323144	1331988
Արտարժույթով	379340	371178	373581	373507
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	109713	60480	51896	49717
Դրամով	60708	13119	10061	13804
Արտարժույթով	49005	47361	41835	35913
Այլ ֆինանսական կազմակերպություններ	183181	183894	180537	176528
Դրամով	140138	141398	137222	134779
Արտարժույթով	43043	42496	43316	41749
Զուտ այլ ակտիվներ	-1076825	-1073901	-1097513	-1118333
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	102120	101771	103163	105799
Արտաքին ակտիվներ ոչ փոխարկելի արտարժույթով	485	429	450	596
Արտաքին պարտավորություններ ոչ փոխարկելի արտարժույթով (-)	-105	-82	-34	-46
Ներդրումներ փայաբաժիններում	8953	9022	9164	9233
Միջբանկային պահանջներ	124659	92204	96376	107561
Այլ ակտիվներ	342379	336895	340787	348027
Միջբանկային պարտավորություններ (-)	-123104	-90386	-95768	-107164
Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր (-)	-199205	-201174	-215551	-222503
Կապիտալ հաշիվներ (-)	-873724	-877517	-881413	-883900
Այլ պարտավորություններ (-)	-459283	-445063	-454688	-475935
ԱՎԱՆԴՆԵՐ	**2715431**	**2669428**	**2767201**	**2833502**
Դրամով ավանդներ	1570200	1510075	1561799	1597699
Ցպահանջ ավանդներ	567239	509570	546278	570289
Ժամկետային ավանդներ	1002962	1000505	1015522	1027410
Արտարժույթով ավանդներ	1145231	1159353	1205401	1235803
Ցպահանջ ավանդներ	397224	416966	437818	454243
Ժամկետային ավանդներ	748007	742387	767584	781561

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2020	2021		
	Դ	Հ	Փ	Մ
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-12286**	**-22722**	**-22663**	**-29190**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	51696	41590	43843	40140
Արտաքին պարտավոր. փոխարկելի արտարժույթով (-)	-53800	-54199	-56400	-58947
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-10181	-10113	-10107	-10382
ԶՆԱ	**67116**	**76454**	**75056**	**80014**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	18075	18299	18429	16048
Պահանջներ Կառավարության նկատմամբ	31293	31138	31181	28955
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-13219	-12839	-12752	-12906
Զուտ պահանջներ ավանդային կազմակերպությունների նկատմամբ	117146	119407	117099	123911
Պահանջներ ավանդային կազմակերպությունների նկատմամբ	233386	234192	235168	239190
Պարտավորություններ ավանդային կազմակերպ. նկատմամբ (-)	-116240	-114785	-118069	-115279
Տնտեսություն	326387	324090	327410	332497
Ձեռնարկություններ	123377	123586	126221	130619
